



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4x4

835
4-96

2.74



№ ԱԱՏԵՆԱԴԱՐԱՆ 14.

БИБЛІОТЕКА
Никиты Осиповича
№ ЭМИНА.

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.

349





9-96

Մ

ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԵՊ

ԳՐԻՄՄԱՅ

ՊԵՏՎԵՐԸՆԴ

N: 14.

2004

Ի ՍՈՍԿՈՒ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐՄԱՑՄԱՆ Մ. ՄԱՆԵՐԵԱՆ:

1879.

ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՑ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԵՊ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 19 Июня, 1879 г.



5417

38

Москва. Типографія А. Гатцук, на Кузнецкомъ мосту, д. Торлецкаго.

ԵՂԲԱՅՐ, քյորիկ^Ա, ասաց եղբայրը քրոջը, բռնելով նորա ձեռքից, ուայն օրից որ մեռաւ մեր մայրը, մենք ոչ մի ժամ չունենք հանգստութիւն. մեր խորթ մայրը ամեն օր ծեծում է մեզ. մենք գնում ենք նորա, մօտ, բայց նա քշում է մեզ ապտակներ հասցնելով: Մենք չունենք ուրիշ կերակուր, բաց ՚ի չոր հացի փշանքներից. մեր շանր անգամ, մեր սեղանի տակին, աւելի լաւ է ապրել, քան թէ մեզ: ՈՇ, Եստուած մեր ողորմած, եթէ իմանար այս մեր մեռած, հարազատ մայրը: Լաւ չէ, որ զնանք հեռանանք այս տեղից^Ա: Եւ արտասուալից աչքով նոքա դուրս եկան տանից և զնացին... Ման եկան նոքա ամբողջ օրը, անցան դաշտեր և հովիտներ, և վերջապէս հասան մի մեծ անտառ: Եոքա սաստիկ յօդնած էին և սկսան որոնել անտառի մէջ ննջելու տեղ: Երկար որոնեցին նոքա հանգստանալու տեղը, և վերջապէս եղբայրը տեսաւ մէկ մեծ ծառի մէջ մի խոռոչ: Եոքա մասն նորա մէջը և քուն եղան:

Միւս օրը, երբ՝ որ նոքա զարթնեցան, արեգակը արդէն բարձր էր և նորա ճառագայթները ուղիղ ընկնում էին խոռոչի վերայ: Եղբայրը ասաց քրոջը. ո՞Քոյրիկ, ես սաստիկ ծարաւել եմ և ջուր եմ ուղում խմելու. զնանք որոնենք մի աղբիւր^Ա, և բռնելով մէկ մէկու ձեռքից, զնացին միասին:

Իսյց նոցա խորթ մայրը, որ կախարդ կին էր, տեսաւ նոցա տանից դուրս գալն, զնաց նոցա ետեղից, և թովեց բոլոր աղբիւրնեղը: Երբ որ նոքա տեսան առաջին աղբիւրը և եղբայրը կամեցաւ նորա ջրից խմել, քոյրը լսեց այդ աղբիւրի միջից մի ձայն, որ ասում էր. „ով որ կը խմէ իմ ջրից, նա կը դառնայ զայլ^Ա: Եւ նա ասաց եղբօրը. „մի խմիր, սիրելի եղբայր, ես եր-

կիւղ եմ կրում, որ երբ դու կդառնաս այնպիսի ահարկու գազան, ինձ ևս կուտես։ Եղքայրը լսեց քրոջ խօսքը, և գնացին առաջ։ Ահա մօտեցան նոքա մի այլ աղքիւրի, որի ջուրը, հանգարա վազում էր. ո՞վ որ իմ ջրից կը խմէ, նա կդառնայ արջ։ ասաց և այս աղքիւրը։ Քոյրը կրկին սկսաւ աղաչել եղքօրը չխմել այդ ջրից. ո՞մի խմիր, եղքայր, ևս շատ վախում եմ արջերից։ Եղքայրը և այս անգամ լսեց քրոջ խօսքը, և նոքա գնացին առաջ, և տեսան մի ուրիշ աղքիւր։ Այս անգամ եղքայրը ասաց քրոջը. ո՞խնչպէս կամիս, քոյրիկ, բայց ևս պիտի խմեմ այս ջրից։ ո՞վ որ իմ ջրից կրխմէ, նա կը դառնայ եղջերու։ ասաց այս երրորդ աղքիւրը։ Քոյրը նորից սկսաւ խընչքրել եղքօրը չխմել այդ ջրից, բայց նա չսեց նորան, և հազիւ խմեց նա փոքր ինչ ջուր, ինչպէս գարձաւ մի գեղեցիկ եղջերու։ Այն ժամանակ քոյրը սկսաւ դառնապէս լալ, և եղջերուն՝ նորա վերայ նոյնպէս սկսաւ լալ։

Լացին նոքա բաւական երկար ժամանակ. յետոյ քոյրը արձակեց իւր գուլպայի ոսկեայ կապը, անցուց նորան եղջերուի զվին, հիւսեց խոտից չուան, և առաջ վարեց նորան։ Երկար ժամանակ նոքա շրջեցին այդ անտառի մէջ, և յանկարծ տեսան մի փոքրիկ տուն։ Վօտեցան տանը, նայեցին ներս և մարդ չտեսան նորա մէջ։

Այդ ժամանակ քոյրը ասաց եղջերուին. „եկ այս տեղ մնանք բնակուենք։“ Եսրա եղջերու-եղքայրը համաձայնեցաւ և սկսան նոքա այս տեղ իւրեանց նոր կեանքը։ Քոյրը իւրաքանչիւր առաւօտ գնում էր անտառ, հաւաքում էր այն տեղ զանազան պառւղներ՝ սունկ, կաղին-իւր համար, իսկ եղջերուի համար՝ քաղում էր կանաչ խոտ։ Երեկոյին, ուտելով ինչ որ քոյրը բերած էր իւր հետ, նոքա պառկում էին քնելու։ Եղջեկը գնում էր իւր գլուխը եղջերուի կռնակի վերայ, և երկուսը այսպէս խոր քուն էին մանում։ Այսպէս տապիցան նոքա բաւական երկար ժամանակ, և քոյրը մեծացաւ և եղաւ գեղեցիկներից գեղեցիկ աղջեկ։

* *

Ահա մի անգամ պատահեցաւ՝ որ այն երկրի թագաւորը ցանկացաւ որսորդութիւն անել այդ անտառի մէջ։ Երբ որ նա եկաւ՝ որսորդները փչեցին փողերը, շները սկսան հաչել, և չորս կողմում տարածուեցան բարձր և ուրախ ձայներ։ Եղջերուն ցանկալով նայել այս որսորդութեան վերայ՝ ասաց քրոջը. „Թռող ինձ զբունուլ անտառի մէջ և նայել որսորդութեան վերայ։“ Քոյրը „Թռող ինձ զբունուլ անտառի մէջ և նայել որսորդութեան վերայ։“ Քոյրը երկար չէր համաձայնում, բայց նա այնպիսի թախանձանօք սկսաւ աղաչել նորանից, որ նա վիրջապէս համաձայնեցաւ և ասաց. ո՞մէ այդպէս է, գնա, զքօսնիր, միայն երեկոյին տես յետ գաս, և երբ կմօտենաս մեր տանը, ասա ինձ. ոքջրիկ, բաց դուռը, և ևս կը բանամ քեզ դուռը. իսկ եթէ դու այդպէս չասիս, ևս քեզ ներս չեմ թողուր։“ Եղջերուն ցատկեց և վազեց ուրախու-





Թեամբ գէպ 'ի որսորդները: «Եռքա իսկոյն տեսան նորան, և սկսան ետելիցը ընկնել, բայց չկարողացան հասնել նորան:

Ի՞ոլը օրը վազվզելուց յետոյ երեկոյին եղջերուն վերադարձաւ տուն և զրան մօտից ասաց. „ՔՇՐԻԿ, բաց գուռը“ և ՔՇՐԸ բացեց դուռը և ներս թողեց նորան:

Պիշերը անցաւ, բայց թագաւորը շարունակեց իւր որսորդութիւնը և միւս օրը: Եղջերուն կրկին լսեց որսորդների փողի ձայնը, և նորից սկսաւ աղաւել քրոջը թողնել զբօնուլ: Քոյրը բացեց դուռը և կրկնեց նորան երեկուան իւր խօսքերը. „անո, չմոռանաս երեկոյին տուն գալու և ասելու այն խօսքերը, որ ես ասացի քեզ մի անգամ“: Հազեւ նա կարողացաւ հասնել անտառը, ինչպէս թագաւորը և որսորդները իսկոյն տեսան նորան և սկսան ընկնել նորա ետելից աւելի զօրութեամբ. բայց եղջերուն յոյժ սրբնթաց էր: Եյսպէս ընկան նոքա նորա ետելից ամբողջ օրը և միայն գէպ 'ի երեկոյ կարողացան ըթապատել նորան, և որսորդներից մինը շատ թեթև վերաւորեց նորա ոտքը: «Եա վերաւորուած սկսաւ կալու և կամաց գնաց տուն: Որսորդներից մինը սկսաւ զիտել նորա ետելից՝ թէ ուր պիտի գնայ: Երբ որ եղջերուն հասաւ տուն և զըռնից ասաց. „ՔՇՐԻԿ, բաց գուռը“, ՔՇՐԸ իսկոյն բացեց դուռը և մտաւ նա տուն: Որսորդն, որ զիտում էր եղջերուի ետելից՝ տեսաւ այս բոլորը և միտք պահեց եղջերուի խօսքերը, և իսկոյն գնաց թագաւորի մօտ և պատմեց նորան այն ամենայն, ինչ որ տեսել էր:

Լուլով այս, թագաւորը հրամայեց շարունակել որսորդութիւնը և երրորդ օրը:

Քոյրը սկզբում երբ որ տեսաւ վերաւոր եղբօրը շատ վախեցաւ, իսկոյն լուաց վերը, զրաւ նորա վերայ բժշկական բոյսեր և կապեց նորան: Յետոյ անկողին պառկեցուց, որ վերը շուտով լաւանայ: Ա էրքը շատ թեթև լինելով մինչեւ առաւաօտ անցաւ:

Պարձեալ լսելով փողերի ձայնը եղջերուն կրկին սկսաւ ինդրուել ման գալու. „Թաճլ ինձ, ՔՇՐԻԿ, վերջին անգամ անտառի մէջ զբօնուլ և որսորդութեան վերայ նայել“, ասաց նա քրոջը: Քոյրը շատ սիրելով եղբօրը, արտասուքը աչքին, ասաց. „նոքա գուցէ սպաննեն քեզ, լաւ է չգնաս“: — „Չէ, ՔՇՐԻԿ, պատասխանեց նա նորան, եթէ դու չես թողուր ինձ, ես կը մեռնեմ սրանեղութիւնիցս“:

Քոյրը տեսանելով նորա սաստիկ ցանկութիւնը գնալու, որտի ցաւով բացեց գուռը, և եղբայրը ուրախ վազեց տանից: Հազեւ թագաւորը տեսաւ նորան, ինչպէս հրամայեց իւր որսորդներին, որ նոքա ընկնեն նորա ետելից մինչեւ երեկոյ, բայց միայն ձեռք չտան նորան: Երբ որ օրը վերջանալու վերայ էր, և արեգակը աներեւթացել էր անտառի ետելին, թագաւորը ասաց այն որսորդին, որ զիտել էր նորա ետելից. „Գնանք, ցոյց տուր ինձ այն տունը“: Որսորդը ցոյց տուաւ տունը, և թագաւորը գուռը ծեծելով ասաց. „ՔՇՐԻԿ,



բաց դուռը՝ “Ես կարծեց՝ թէ եղջերու-եղբայրն է և բացեց դուռը։ Թառ-
գաւորը մտաւ ներս և տեսաւ այնպիսի մի գեղեցիկ օրիորդ, որպիսի նա իւր
կեանքումը բնաւին տեսած չէր։ Առաջին անգամից նա նորան սիրեց։ Իսկ
աղջեկը սաստիկ վախեցաւ, երբ որ տեսաւ իւր առջեռում եղջերուի տեղ ան-
ձանօթ մարդ ոսկի թագ զլիին։ Թագաւորը նայեց նորա վերայ սիրով և
քաղցրութեամբ և ասաց. “Քեզ նեղութիւն է բնակել այս տեղ միայնակ,
գնանք իմ պալատը, և եղիր ինձ ամուսին։”

Օրիորդը ընդունեց այս առաջարկութիւնը և կարմիկով պատաս-
խանեց. “Թէ ձեր կայսերական մեծութեան ցանկալի է, ևս համաձայն եմ,
միայն կը կամենայի եղջերուն առնել իմ հետ. ևս նորանից երեք կարող չեմ
բաժանուել, որովհետեւ նա իմ հարազատ եղբայրս է”։ — “Ի՞նչպէս, եղբայր!”
հարցուց հետաքրքրութեամբ թագաւորը։ Եւ օրիորդը պատմեց կարգով բոլոր
եղելութիւնը՝ թէ ինչպէս եղբայրը խմել էր աղբիւրի ջուրը և գարձել էր
եղերու։ Թագաւորը շատ ցաւեցաւ, և յետոյ ասաց. “Առաջ, եթէ այսպէս է,
առնենք նորան, թող և նա ապրի մեր մօտ կատարեալ բաւականութեան մէջ”։
Այդ բոպէին վազելով մտաւ ներս եղջերուն։ քոյրը անցուց վեզը իւր դու-
պայի ոսկեայ կապը և քաշեց տարաւ իւր հետ։

Պատաղ օրիորդը և թագաւորը նստան ձի, և ուղղեցին իւրեանց ձա-
նապարհը գեպ ՚ի պալատ։ Եղջերուն վազում էր նոցա ետևից։ Երբ որ հա-
սան պալատ, այս տեղ կատարեցին նոքա շքեղ հարսանիք։ Այսպէս աղքատ
աղջեկը եղաւ թագուհի, և ապրեցան նոքա բաւականութեան և երջանկու-
թեան մէջ։ Իսկ եղջերուն խաղում և վազում էր պալատի պարակների մէջ
առանց երկիւղի։

Իսայց անգութ կախարդ կինը, որ պատճառ էր եղել սիրուն տղայի եղջե-
րու դառնալուն, կարծում էր՝ թէ ինչպէս նա, նոյնպէս և նորա քոյրը կորած
են անտառում։ Պարծում էր նա՝ թէ աղջեկը դազանների կերակուր է եղել,
իսկ եղջերուն սպանուել է որսորդներից։ Իսայց երբ իմացաւ, թէ նոքա ողջ
և առողջ են և թէ աղջեկը եղել է թագաւորի կին, բարկացաւ սաստիկ, և
միաքը զբեց անպատճառ ոչնչացնել նոցա։ Իսկ նորա հարազատ դուստրը,
որ շատ տգեղ էր երեսով, վշտացած ասաց մօրը. “Ինձ հարկաւոր էր թա-
գուհի լինել և ոչ նորան”։ Այյրը միսիթարեց նորան ասելով. “սպասիր, սի-
գուհի կինը և ասաց. “իս մի անգամ ևս կուգամ” և յետի դուք ինձ
տեսնելու չեք”։

* *

Անցաւ մէկ տարի և թագաւորի ամուսինը ծնաւ մի որդի։ Թագաւորը
այդ միջոցին դարձեալ գնացել էր որսորդութեան։ Պախարդ կինը՝ այդ բոպէն
յարմար ժամանակ համարելով, ընդունեց պալատի ծառայի կերպարանք,
հրամայեց սաստիկ վառել պալատի բաղանիքը, և հրաւիրեց թագաւորի

զեռ հիւանդ կնոջը լուացուելու, ասելով. “Փութացէք, թագուհի, ջուրը կը
սառչի”։ Այդ ժամանակ կախարդ կնոջ աղջեկը ևս այս տեղ էր։ “Եղա
երկուսով՝ վերցուցին թագուհին տարան նորան բաղանիս, և ծածկելով բա-
ղանիսի զըռները, թողին նորան այն տեղ որ շնչառառ լինի։ Յետոյ կախարդ
կինը տուաւ իւր տգեղ աղջկան թագաւորի կնոջ կերպարանք, միայն չկարողա-
ցաւ բժշկել նորա ծուռ աչքը։ Հազուց նա նորա զլիին չէպէկ և պակեցուց
անկողին։ որ թագաւորը չհասկանայ խարդախութիւնը՝ նա զարձուց նորան
ծուռ աչքով գեպ ՚ի պատասխան կը որ թագաւորը վերադարձաւ որսոր-
դութիւնից և իմացաւ՝ թէ կինը ծնել է որդի, շատ ուրախացաւ և շտապեց
գնաւ նորա սենեակը։ Իսայց այս տեղ կախարդ կինը ասաց նորան. “Ինդիմ
չքաշեք վարագոյրը որովհետեւ նորին մեծութիւնը շատ թոյլ է”։ Թագաւորը
լսեց կախարդ կնոջ խօսքը, և հանգիստ թովեց իւր կինը։ “Ես չգիտէք՝ թէ
այն տեղ պառկած է ոչ նորա կինը, այլ չար կնոջ ծուռ աչքով գուստը։

Ուղեղ կէս զիշերին, երբ որ պալատի մէջ ամենեքեան քնած էին
խոր քնով, մանկակալը՝ որ միշտ գտանվում էր մանկան օրօրոցի մօտ, ան-
սաւ, որ գուռը բացուցաւ և մտաւ ներս իսկական թագուհին՝ մանկան մայրը։
“Ես առաւ մանուկը ձեռքը և ծիծ տուաւ նորան. յետոյ ուղղեց նորա ան-
կողինը, ծեծեց նորա բարձերը, և զրաւ նորան դարձեալ օրօրոց։ Չմոռացաւ
նա համբուրել և իւր եղջերու-եղջերուին և լրւու ու մունջ ելաւ սենեկից։

Միւս առաւօտ մանկակալը հարցնում էր գոնապաններից՝ թէ արդեօք
չտեսան նոքա մի մարդ որ զիշերով մանել էր պալատ։ Նոքա միաբերան պատաս-
խանեցին՝ թէ „մարդ չենք տեսած”։ Այսպէս անցաւ քանի մի օր, և մանկա-
կալը տեսանում էր ինչպէս թագուհին, թագաւորի իսկական կինը, զրլիս էր
մանկական սենեակը և մանկան ծիծ էր տալիս. բայց մարդու բան չասաց։ Ահա
մէկ զիշեր թագուհին ըստ սովորութեան, զալով մանկան մօտ ասաց. “այժմ
մնաց ինձ գալ այս տեղ երկու անգամ միայն, և յետոյ մնաս բարով ասել”։

Մանկակալը պատասխան չտուաւ նորան, բայց միայն երբ նա գնաց,
վազեց ուղղակի թագաւորի մօտ, և պատեց նորան բոլոր բանը։ Թագա-
ւորը շատ զարմացաւ երբ լսեց այս, և վճռեց անցնել զիշերը մանկական սենե-
կում։ Մանկան մայրը, կէս զիշերին, ըստ սովորութեան, եկաւ մանկական
սենեակը և ասաց. “իս մի անգամ ևս կուգամ” և յետի դուք ինձ
տեսնելու չեք”։

Այս խօսքերս ասելով նա առաւ մանուկը իւր ձեռքը, ծիծ տուաւ
նորան, և գուրս եկաւ սենեկից։ Թագաւորը, որ տեսել էր այս բոլորը, չփառ-
հացաւ բառ մի ասելու նորան և միւս զիշեր դարձեալ եկաւ մանկական սեն-
եկը։ Աէս զիշերին թագուհին, նորա իսկական կինը, զըռները բանալով,
կրկին ներս մտաւ և ասաց. “ահա այժմ ես վերջին անգամ այս տեղ եմ,
և աւելի զալու չեմ”։ Եւ հազեւ նա ասաց այդ, ինչպէս թագաւորը ընկաւ
նորա սովը և ասաց. “դու անպատճառ իմ թամնկագին ամուսինս պիտի
նորա սովը և ասաց. “դու անպատճառ իմ թամնկագին ամուսինս պիտի

լինես": "Եա պատասխանեց. „այ՞ո, ես քո ամուսինդ եմ", և նոյն բոպէին,
Աստուծոյ ողորմութեամբ, նա կրկին կենդանացաւ, և եղաւ առողջ և գեղեցիկ
առաջուայ պէս:

Այս տեղ նա պատմեց իւր ամուսնոյն՝ թագաւորին՝ թէ ինչպէս վա-
րուել էր նորա հետ կախարդ կինը: Թագաւորը սաստիկ զայրացաւ կախարդ
կնոջ վերայ և հրամայեց դասել նորան և նորա աղջեկը: Միւս օրը նոքա
դատապարտուեցան. աղջկանը տարան անտառ և այն տեղ ձգեցին զաղաններին
կերակուր լինելու համար, իսկ նորա մօրը կրակը ձգեցին և այրեցին: Եւ հազե-
այրուեցաւ կախարդ կինը, ինչպէս թագուհւոյ եղբայր - եղջերուն կերպարա-
նափոխուեցաւ՝ ստանալով դարձեալ մարդու կերպարանք:

Եւ ապրեցան նոքա այնուհետեւ շատ տարիներ սիրով և կատարեալ
երջանկութեան մէջ:



024



974

00004639

2013



NL0004639

ՀՀ Ազգային գրադարան

